



Գրադէտ դոկտորը Քրանսերէն լեզուաբանական ընդարձակ գործք մը գրկեր է, որուն տնտեսն է «Les anciens Médecins arméniens d'iplomés des Facultés d'Italie de (1700—1840), ուր հայոց բժշկականութեան վրայ ընդհանուր ակնարկ մը նետելէ ետքը՝ կը յիշէ ԺԱ—ԺԶ դարու հայ բժիշկները, և ապա կանցնի ընդարձակօրէն պատմելու բուն համալսարանական հայ բժիշկներուն կեանք և անոնց բժշկական գործունէութիւնը: Այն համալսարանական հայ բժիշկները, որոնք առաջին անգամ իտալական եղած են՝ 15 հոգի են. 1. Ոսկան Գրիգորեան 1691—1766:—2. Յակոբ Հերմէթեան 1706—1786:—3. Կարապետ Յովսէփեան 1718—1790:—4. Պետրոս Հերմէթեան 1740—1800:—5. Պողոս Շաշիեան 1744—1806:—6. Ստեփան Շահրիմանեան 1754—1820:—7. Գրիգոր Աւանեսեան 1865:—8. Միքայէլ Մանուէլ Տէր-Պետրոսեան 1774—1844:—9. Մանուէլ Շաշիեան 1775—1858:—10. Սարգիս Կարապետեան 1795—1869:—11. Պողոս Շաշիեան 1806—1881:—12. Յարութիւն Պէտանեան 1810—1882:—13. Յակոբ Տափուտեան 1813—1878:—14. Գառնար Մինասեան 1814—1872:—15. Սերովբէ Վիշնեան 1815—1897:

Ասոնցմէ զատ՝ Կինգ վեց հոգի ևս անուամբ միայն յիշած է:—Այս անխնայ մշակը պէտք չունի մեր դրուատեաց, առթիւ այս օտարներու առջև հայ ազգին պատիւ բերող երկատիրութեան: Արդէն ո՞վ չի ծանօթար մատենագիր Դր. Վահրամ Թորգոմեան, ո՞վ չէ լսած այս սիրոված ծանօթ անունը, ո՞վ չէ գնահատած անոր հայ ազգին և գրականութեան, հայուն մտաց և մարմնոյ մատուցած անգին ծառայութիւնները:—Յանուն հայ հասարակութեան Ուսումնական Խորհրդոյ Առնագլխաւոր պիտի խնդրենք, որ իր հրատարակած ու հրատարակելի հայերէն կենսագրութիւններն ալ առանձին հատորներու մէջ ամփոփէ, որոնք շատ կը փնտրուին, ի մասնաւորի գեռ շարունակելին:

ՆԱՄԱԿ ԱՍԽԱՐԱԴԻՑ

Մայիսի 9-ին

Տակաւին չէ անցել Անդրկասպեան երկրին անցեալ տարվայ անբերրութիւնից հետոյ տնտեսական ապագայի ստուերը, երբ ներկայ գարունը ամբողջ երկրի համար կրկին օտարածից մի այնպիսի անսպասելի ճգնաժամ, որի անսկզկալ երեւոյթները հետզհետէ բարդւում են: Եւ այդ չարաբաստիկ կրիգիւր առաջ բերեց մի քանի չը նախատեսւած երեւոյթներ, որոնք անխնայ կերպով հարուածում են երկրի:

Զգալի հարուածներ է հասցնում նախ բնութեան տնտեսական արհաւիրքը, որի առաջին աստիճանը փոփոխեց դոնար է: Ներկայումս Անդրկասպեան երկրի միջնորոտը ամբողջապէս ողողւած ու ծով է դարձած մորեխներով, որոնք շատ կարճ միջոցում անխնայ կերպով հնձելու, ոչնչացնելու են ամբողջ բուսականութիւնը: Երկրորդ՝ զէպի Թուրքեստան տանող երկաթուղու վրայ, ամբողջ Ռէշէնի և Մերվի չըջա-

ն կեանքը հոսեց առաջվայ պէս: Դարձեալ խոնավ միջ ծնվում, մեծանում, սիրում և մեծանում էին մարդիկ, իր անդորր յոյսով, թէ հազար դարերից յետոյ լոյս պիտի գայ երկրի վրայ:

Բայց ահա մի անգամ մութ հորիզոնի վրայ երկինքը թոյլ կերպով լուսաւորեց փայլիլող զոդոդուն լոյսով:

—Այն ինչ է այնտեղ, զարմացած հարցնում էին մարդիկ, խմբվելով փողոցներում և հրապարակում:

Երկինքը հորիզոնի մօտ ժամ առ ժամ լուսաւորվում էր. կայայտ շողերը սայթաքում էին մշուշի վրայով, թափանցում ամպերի մէջ և լայն լոյսով ողողում երկնային հարթավայրերը: Մտայլ ամպերը օարսափած, կծկվելով և ընդհարվելով հեռուն էին փախչում, և յաղթանակող ճառագայթները աւելի և աւելի պայծառ էին հեղեղվում երկնքի երեսին, և մի անսովոր խնդութեան սարսուռ անցկացաւ երկրի վրայով:

—Այդ լոյսը կարող է լինել միայն յաւիտեանական երկնային աստղից, մտախոհ արտասանեց ծերունի քուրմ Սաթրաբ:

—Բայց ինչպէս կարող էր իջնել երկրի վրայ, առարկեց Թուրք՝ խելօքների ուսուցիչը, գիտութեան լոյսը:—Ո՛հ, չը կայ մեզ համար ուղի զէպի աստղերը, և աստղերի համար զէպի մեզ:

Իսկ երկինքը աւելի և աւելի էր լուսաւորվում, և յանկարծ հեռում, հորիզոնում երևաց մի արտասովոր, շողողուն պայծառ կէտ:

կաները սաստիկ հեղեղների են ենթարկվել. բնակիչները վառագից ազատվելու համար հեռացել են իրանց բնակատեղիներից, հաղորդակցութիւնը՝ Անդրկասպեան երկրից զէպի Թուրքեստանի խորքերը՝ միանգամայն ընդհատվել է. գործում են միայն հեռագրական թելերը, այն էլ ոչ միշտ: Եւ այժմ, Միլին-Ասիա եկող բոլոր ճանապարհորդները ստիպված են լինում կամ Ասիաթարուս միջով և կամ անցնել մի քանի կայարաններ զէպի առաջ և այնտեղ սպասել, ուր ոչ միայն շարժանք, այլ և մի օր նոյն իսկ միջուկ ոչ մի յարմարութիւն չը կայ:

Երրորդ հանգամանքը աւելի ծանր և զգալի կերպով փնտրւում է: Դա ասիականից Պարսկաստանում՝ Մէշէդում տիրող սոսկալի սովն է, որի պատճառով միանգամայն հնարաւորութիւն չը կայ ոչ ապրանքների ներմուծում և ոչ էլ արտահանում կատարելու Պարսկաստանից, ուստի արտահանվելու համար՝ Միլին-Ասիայից ճանապարհված ապրանքները մնում են այստեղ, իսկ պարսկական ապրանքները, որոնց քանակութիւնը ահագին է, մնում են թափված սահմանագլխում գտնվող պարսկական անապատով զարկանաբարներում:

Անդրկասպեան երկրի գլխաւոր կենտրոնական վաճառատներն համարվում է Ասիաթարքը: այստեղ են գտնվում այն մեծ ֆերմաները, որոնք լայնածաւալ առևտուր են վարում Պարսկաստանի հետ: Չը նայելով այդ բոլորին, Միլին-Ասիան մինչև Պարսկաստան ոչ երկաթուղի ունի և ոչ էլ կանխաւոր խնդիր, որով կարելի լինէր գտնել սայլերով ազատօրէն տեղափոխել ապրանքները: Ներկայումս ապրանք փոխադրողներն են միմիայն պարսկաստանցի ուղղաւորները—չարվադարները, որոնք հսկայական քարվանդներով տեղափոխում են ամեն մի ապրանք, ամեն մի արդիւնաբերութիւն: Ի նկատի ունենալով Մէշէդի անակնկալ պատահարը—սովը, պարսից կառավարութիւնը ստիպված է լինում արգելել ուղղաւորների սովորական ճանապարհորդութիւնը, որպէս զի հընարաւորութիւն ունենալ հացահատիկներ փոխադրել երկրի մի մասից զէպի միւսը: Ահա այդ հանգամանքներից առաջ է գալիս արտասահման հանման և ներմուծման ժամանակաւոր ընդհատումը, որը և առթիւ է դառնում մեր շուկայում ճգնաժամի տիրապետութեան:

Ըստ ամենայնի ծանր ու կրիտիկական է ընդհանուրի դրութիւնը. այժմ մենք պէտք է սպասենք, որ Ռէշէնի հեղեղանքների տուած փնտրները անցնեն, Մուրղաբ գետի վարարումը վերջանայ, որից յետոյ քարուքանդ եղած ճանապարհների վրայ ահագին աշխատանք ըրբվի, այնուհետև Մէշէդի սովը վերջանայ, որպէս զի մեր ներկայ տնտեսական վիճակը վերականգնանայ: Բայց արդեօք դրանով ամեն բան կը վերջանայ, տաքսալը կանցնի. հապտ ինչպէս ազատվել մորեխից, որի զէպ եռանդուն միջոցն է ձեռք առնել կառավարութիւնը:

Սուբխաթեան

—Առաջը, աստղը գալիս է, ուրախագին աղաղակ բարձրացաւ ամբողջ քաղաքում, և մարդիկ վաղցրին ընդ առաջ զէպի հեռում փախել կէտը:

Երեւելի լոյսի պէս պայծառ շողերը քրչում էին իրանց առաջից նեխած մշուշը, որ ցրված, կտոր-կտոր այս ու այն կողմն էր տարածվում և կաշում հողին: Լուսաւորվեց և պարզվեց երկրի ամբողջ հեռատանը, և մարդիկ տեսան, թէ որքան լայն էր այդ հեռատանը, որքան ազատ տեղ կար երկրի վրայ, և որքան եղբայրներ ունէին, որոնք ապրում են ցրված ամեն կողմ:

Եւ նրանք շտապում էին դիմաւորելու մօտեցող աստղին: Ճանապարհին յամրաքայլ գալիս էր Աշէի լը բարձր բնած երկնքից պոկած աստղի ճառագայթները:

—Ո՛հ, են մնացածները, հարցնում էին նրան:

—Ամենքը մեռան, պատասխանեց Աշէի ընդհատվող ձայնով: Մեռան վիհերի և անդունդների մէջ, ճանապարհ հարթելով զէպի երկինքը:

Բերկրացող ամբողջ չըջապատել էր աստղակիւն: Աղջիկները ծաղիկներ էին թափում նրա վրայ, ամեն կողմից լսվում էին հիացմունքի աղաղակներ:

—Փնտը Աշէի լի, փնտը լոյս բերողին: Նա ասաւ քաղաքը և կանգ առաւ: Կրակաբանութիւն, ձեռքին բարձր բռնած շողողուն

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ

Պետրոսեան, մայիսի 4-ին

Եթէ կարելի է, թոյլ տուէք մի փոքրիկ բացատրութիւն տալ իմ Բանաստեղծ-Իշխանագրքի մասին: Իմ յայտարարութեան մէջ ես խոստացել եմ ձեր ուղարկել մի-մի օրինակ «Ընթերցասէր, բայց միջոց չունեցող ընտանիքներին»: Իմ այս խոստումը ի նկատի ունենալով, մինչև օրս դիմել են ինձ մօտ երեսուց հոգի: Սրանք կիսով չափ, ինչպէս իրանց նամակներից երևում է, իսկապէս միջոց չունեցող և կարգաւ ցանկացող ընտանիքներ են, ուստի և անպատճառ կը ստանան մեր գիրքը: Միայն թէ, որովհետև երկրորդ հատորը չուտով լոյս է տեսնելու, և որովհետև ոչ ոք մեզ մի կօպէկ ճանապարհածախս չէ ուղարկել (իւրաքանչիւր գիրքը աւելի քան 50 կօպէկ պատի ծախս է պահանջում), մենք հասցնելու ենք յիշեալ գրքերը ամառվայ ընթացքում մասամբ ձեռ առ ձեռ և մասամբ մեր գործակալների միջոցով:

Բացի ընտանիքներից, դիմում են մեզ և զանազան հիմնարկութիւնների կամ խմբակների կողմից: Թէև մեր յայտարարութիւնը միայն ընտանիքներին է վերաբերում, այնուամենայնիւ այդ դիմումներին էլ մենք մեծ մասամբ բաւարարուելու կը տանք (մասնաւոր գիրքական գրադարաններին, չքաւոր զինուորներին և այլն): Բայց, օրինակ, դիմում են մեզ և մի մեծ քաղաքի միջնակարգ դպրոցի հինգերորդ դասարան հայ աշակերտների կողմից: Ահա այնպիսի դիմումները մի փոքր կասկածաւոր են: Միթէ այդ ամբողջ դասարանը մէջ չը կար մարդիկ, որոնք հինգ-հինգ կօպէկ իրանց մէջ հաւաքելով կարող էին շարունակ ձեռք բերել այս ու այն գիրքը: Բայց կարող է լինել, որ հայերէն կարգաւ ցանկութիւն ունեցողները միայն մի քանի չքաւոր աշակերտներ են: Այս զէպում մեզ պիտի հէնց այդ ձեռք էլ դիմեն, որ մենք հաւատարմութիւն տանք մեր գործարարութեամբ ոչ թէ ձերակներն, որ բանակն ենք ընդարձակում, այլ միայն չքաւորներին ենք օգնում:

Վերջապէս մեզ դիմում են առանձին անհատներ (կրկնում ենք, որ մեր յայտարարութիւնը միայն ընտանիքներին է վերաբերում): Առանձին անհատը հեղուկեամբ կարող է օգտվել, գրադարաններից կամ այս ու այն բարեկամից վերցնելով: Գրել ու կարգաւ իմացող մի երիտասարդի համար դժուար չէ իր չոր-չորիւր պահել, թէ նիւթական տեսակետից և թէ հէնց մասաւոր ասպարէզում: Ուրիշ բան է, երբ մի տարեւաւոր, հիւանդարհեաւոր ստիպված է ամբողջ ընտանիք կերակրել: Ահա այնպիսի չէ կարող հեշտութեամբ գրքի փող տալ: Այդպիսի ընտանիքին ոչ միայն պէտք է գիրք տալ, այլ և պէտք է բացել նրա անդամների առաջ գրադարանների, թատրոնների և առհասարակ բոլոր օգտակար հիմնարկութիւնների դռները, եկեղեցին ձեռ օրինակ... Այդ բացատրութիւնը տալուց յետոյ, այնուամենայնիւ մենք անպայման չենք մերժում մեզ դիմող անհատներին, որովհետև կարող են բացառիկ հանդիմանքներ լինել: Միայն խնդրում ենք, որ այդպիսիները մեզ բաւարար բացատրութիւն տան իրանց դրութեան մասին:

Կան և այնպիսի մարդիկ, որոնց մասին չար-ժէր խօսել, բայց պէտք է խօսել... Դիմում է մեզ, օրինակ, հարուստ մաքաղիւնում ապահով պաշտօն ունեցող մի երիտասարդ գործակալատար. ընտանիքի մասին խօսք չը կայ: Պարտք կարգացել է, որ մենք մեր գիրքը ձեր ենք ուղարկում և որովհետև ինքը չէ կարող իր

աստղը: Եւ ամբողջ քաղաքը լցվեց ուրախութիւններով:

Անցան օրեր: Առավոյայ պէս պայծառ փայլում էր հրապարակի մէջ աստղը, որ Աշէի ձեռքին բարձր բռնած էր: Բայց վաղուց արդէն քաղաքում դադարել էին ուրախութիւնները: Մարդիկ չըջում էին բարկացած, մտայլ ու գլխաւոր, և ջանք էին անում չը նայել մի-մեանց: Երբ որ պէտք էր լինում հրապարակով անցնել, նրանց աչքերը Աշէի լի տեսնելուն պէս այրվում էին և ասեղութեամբ Երգեր և աղօթքներ չէին լսվում: Աստղից ցրված նեխած մշուշի փոխարէն քաղաքի վրայ անտեսանելի մշուշով թանձրացել էր սև, մտայլ չարիքը, թանձրացել էր, մեծացել ու լարվել, և նրա ճնշման տակ անկարելի էր ապրել:

Եւ ահա լաց ու կոծող դուրս եկաւ հրապարակ մի մարդ. նրա աչքերը այրվում էին, երեսը ծածկում էր սիրտ յօշոտող չարութիւնը:

—Թող կորչի աստղը, կորչի անիծեալ աստղակիրը,—կատաղած աղաղակում էր նա.—եղբայրներ, միթէ ձեր ամենի հոգին չէ ողբում իմ չըթուանքներով: Գորչի աստղը, կորչի լոյսը,—նա մեզ գրկեց կեանքից ու ուրախութիւնից: Մենք հանգիստ և անյոյզ ապրում էինք միջութեան մէջ, սիրում էինք մեր սիրելի օթխանքները, մեր անցորդ կեանքը: Եւ տե՛ս,—ինչ պատահեց: Եկաւ լոյսը,— և էլ ուրախութիւն չունեց, ոչ մի բանում: Կեղտոտ աշ-

քաղաք արտի ուղած գրքերը փողով գնել, ուստի... Այդ արդէն...

Մեր գրքի հրատարակութեան քանի մի բանակարգի նիւթապէս աջակցել են: Ահա առայժմ այդ աջակցութեան հաշիւը մեր ձեռքի տակ կան մօտ 50 օրինակ մեր գրքից, որը և կուղարկենք միջոց չունեցողներին: Գուցէ կը գտնվեն մարդիկ, որոնք կը մեծացնեն յիշեալ թիւը: Հակառակ զէպում մենք ինքներս զըրկանքի ենթարկվելով, կը շարունակենք կատարել մեր խոստումը: Հայոց հարուստ հասարակութիւնը, ինչպէս զէպի բոլոր հայ գրողները, նոյնպէս և զէպի մեզ, վերաբերվում է բարեարարաբար, բառի բուն նշանակութեամբ: Մի հասարակութիւն, որը խելագիւղացանի է նազարեանցներին, նախանդանցներին, Բաֆֆիներին... Ինչպէս կարող է ուրիշ կերպ վերաբերվել զէպի նրանց համատ աշակերտներ... Այնուամենայնիւ իւրաքանչիւր հայ գրող պիտի իր գրօշակի վրայ գրէ. «Եկեք ինձ մօտ, բոլոր յոգնածներ և վշտացածներ և ես հանգստութիւն կը տալ ձեզ», չը նայելով որ իւրաքանչիւր հայ գրող ինքը ամենից շատ է յոգնած և ամենից շատ է ծանրաբեռնված...

Ս. Թաւայեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ

(ձեռագրով)

Պետրոսեան, մայիսի 24-ին

«ԵԱՅՅ» լրագրում տպված է մի յօդուած իմ մասին: Այդ ամբողջ յօդուածը սուտ է: Այդպիսի բան երբեք տեղի չէ ունեցել: Գործին պատշաճաւոր ընթացք է տուած:

Միւս լրագիրներից խնդրում եմ արտասպել այս երկատուր:

Բժշկապետ Վ. Արծրունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Կիրակի, մայիսի 25-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնայի Ծննդեան տօնի օրը, Սիւնի մայր եկեղեցում կատարվեց պատարագ և ապա տեղի ունեցաւ գոհացողական մաղթանք, որին ներկայ էին Կովկասեան կառավարչապետի օգնական գեներալ Սիրեգէ և Թիֆլիսի գինուորական ու քաղաքացիական իշխանութիւնների ներկայացուցիչները: Գոհացողական մաղթանքներ կատարվեցին նաև ինչպէս հայոց Վանքի մայր-եկեղեցում, այնպէս էլ միւս դասակարգի կառավարչական պատկանող աղօթքներին եկեղեցիներում և աղօթատներում: Բաղաձոր առաջնորդներից զարգարված էր զբօշակներով իսկ երեկոյեան լուսավորում էր:

Հռոմից հաստատ աղբիւրից տեղեկութիւն ստացանք, որ Թիֆլիսի հայ-կաթօլիկների հովիւ Գաբրիէլ վարդապետ Նախապետեան, որը կանչված է Հռոմ Կովկասի հայ-կաթօլիկների հոգևոր գործերի մասին բացատրութիւններ տալու համար, այս մայիս ամսի 27-ին (նոր տոմարով) պապի հետ առանձին ունկնդրութեան արժանացաւ Նորին սրբութիւնը սիրով լսեց նրա խնդրանքներ և հայրական գործով վերաբերվեց նրան:

Թիֆլիսի փողոցները կատարելագործված ե-

լանդակ կոյտերով խմբված են մեր տները, ծառերի տերեւները դեղնած են և լարծնու, ինչպէս գործի փորի կաշին: Նայեցէք երկրին,—նա ամբողջապէս ծածկված է արեւնաչաղախ կեղտով: Որսեղից է այդ արեւը, ո՞վ գիտէ: Բայց նա կպչում է ձեռքերից, նրա հոտը հալածում է մեզ ուտելուց և քնի մէջ, նա թունաւորում է և ուժաւորում է անում մեր հեղիկ աղօթքները՝ զէպի աստղերը: Եւ ոչ մի տեղ փրկութիւն չը կայ այդ յանդուգն, ամենուրեք թափանցող լոյսից, որ ներս է մտնում մեր տներին մէջ, և ահա մենք տեսնում ենք բոլոր մեր տները ծեփված են կեղտով: Կեղտը խոր մտել է պատերին մէջ, ծածկել է պատահանները, դարչափող կոյտերով կիսվել անկիւններում: Մենք այլ ևս չենք կարողանում համարաւորել մեր սիրելի, Աշէի լի աստղի ներկայութեամբ նրանք դարձել են աւելի լի զգուշիւ, քան գերեզմանի որդերը, նրանց աչքերը դռնաւոր են, ինչպէս ճիւղների աչքերը, փափուկ մարմինները ծածկված են բո՛ւ ծերով և արտաօլում են, ինչպէս բորբոսը: Եւ միմեանց, մենք էլ չենք տեսնում նախ յետոյ, մարդ չենք տեսնում մեր առջև, այլ մարդու անուանաբովութիւնը... Մեր իւրաքանչիւր գաղտնի քայլը, մեր իւրաքանչիւր թափում շարժումը լուսաւորում է այդ անուղղորդ լոյսը... Ապրել անկարելի է, Գորչի աստղակիրը, թող խորտակվի լոյսը:

(Գր շարունակվի)



